

<http://www.tert.am/am/news/2011/06/29/energy/>

Վերականգնվող էներգետիկայի ոլորտում Հայաստանը տարածաշրջանային լիդեր է

12:54 • 29.06.11



Հայաստանը մինչև վերջերս վերականգնվող էներգետիկայի ոլորտում տարածաշրջանում բացարձակ լիդեր էր, հիմա որոշ առումներով մի փոքր զիջում է Թուրքիային: Իսկ փոքր ՀԷԿ-երի ոլորտում տարածաշրջանում բացարձակ առաջատար է: Այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ այս մասին հայտնեց Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի վերականգնվող էներգետիկայի ծրագրի համակարգող Արայիկ Մարջանյանը: Նա նշեց, որ «գործերը մի փոքր հետ են մնում» հողմաէներգետիկայում և արեգակնային ֆոտովոլտայիկ էներգետիկայում:

«Եթե մենք մեծ ՀԷԿ-երն էլ հաշվենք, որոնք օգտագործում են ջուր և, հետևաբար, լիովին կարող են դասվել վերականգնվող էներգիայի շարքը, ապա էլեկտրական էներգիայի 35 տոկոսը կարող է փակվել վերականգնվող աղբյուրներից: Բայց եթե մենք վերականգնվող էներգետիկան սահմանենք այնպես, ինչպես դա հիմա ընդունված է Եվրոպայում, այսինքն մեծ հիդրոէներգետիկան հանվում է, և դիտարկվում են միայն փոքր հզորություն ունեցող հիդրոկայանները, ապա այդ տոկոսը զգալի նվազում է, և եթե այդ ցուցանիշը Հայաստանի համար հասնի 10 տոկոսի՝ ամբողջ էներգետիկ ոլորտի մեջ, ապա շատ մեծ ցուցանիշ կլինի: Այս պահին միայն փոքր ՀԷԿ-երը տալիս են ամբողջ էլեկտրական արտադրանքի մոտավերապես 5 տոկոսը, ինչն ուղղակի բացառիկ ցուցանիշ է», – ասաց Արայիկ Մարջանյանը:

Էներգետիկա ասելով՝ մասնագետները նկատի ունեն ոչ միայն էլեկտրական էներգիան, այլ նաև ջերմությունն ու տրանսպորտը: Եվ վերականգնվող

Էներգետիկան, ըստ Արայիկ Մարջանյանի, «խոսք ունի ասելու այս բոլոր երեք
բնագավառներում էլ»:

Tert.am